

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 30 2023թ.

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

### **Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում**

#### **1.1 Իրավական դաշտ**

##### **1.1.1 Բանկի հիմնական գործունեությունը**

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 2004 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 2004 թվականի հոկտեմբերի 7-ին՝ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրված N84 արտոնագրային համարով: Բանկային գործունեության լիցենզիան տրվել է ՀՀ ԿԲ-ի Խորհրդի 25.02.2005թ. թիվ 74Ա որոշմամբ:

Բանկի հիմնական գործունեությունը կորպորատիվ, ներդրումային և մասնավոր ֆինանսների կառավարմանը բնորոշ ծառայությունների մատուցումն է՝ ֆինանսական գործիքներում ներդրումներ, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ավանդների ներգրավում, ֆինանսավորման (վարկավորում, ֆակտորինգ) և բանկային այլ ծառայությունների մատուցում:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկի իրավաբանական և փաստացի գործունեության հասցեն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 10: Բանկի աշխատակիցների թվաքանակը կազմել է 157, այդ թվում սպասարկող անձնակազմը 10:

##### **1.1.2 Գործարար միջավայրը**

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին:

Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Բանկի ապագա գործունեության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում որևէ ճշգրտումներ, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների հետագայում որոշակի դառնալու արդյունքում: Նման ճշգրտումները, եթե այդպիսիք կլինեն, կարտացոլվեն Բանկի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ այդ ճշգրտումներն ի հայտ կգան և դրանք հնարավոր կլինի գնահատել:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում: Գնանշումները ցածր իրացվելի շուկաներում կարող են չհամընկնել ֆինանսական գործիքների իրական արժեքներին, ինչը հնարավոր կլինի ակտիվ շուկայի դեպքում, միմյանց հետ գործարքների պատրաստ մեծ թվով վաճառողների և գնորդների պայմաններում:

1.1.3 Բանկը որևէ խմբի անդամ չի հանդիսանում:

## 1.2 Կորպորատիվ կառավարում

### 1.2.1 Խորհրդի կառուցվածքը և կազմը

Բանկի Խորհուրդը (ներառյալ Խորհրդի նախագահը) բաղկացած է հինգ անդամից: Խորհրդի նախագահը հանդիսանում է Վարդան Սիրմաքետը, Խորհրդի մյուս անդամներն են՝ Գևորգ Չաքմիշյան, Րաֆֆի Բալոգյան, Արմենակ Դարբինյան, Մերուժան Գալստյան:

### 1.2.2 Տնօրինության կառուցվածքը և կազմը

Բանկի Տնօրինությունը (ներառյալ Տնօրինության նախագահը) բաղկացած է յոթ անդամից: Տնօրինության նախագահը հանդիսանում է Բանկի գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանը, Տնօրինության մյուս անդամներն են Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման դեպարտամենտի տնօրեն Գրիգոր Մովսիսյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Ներդրումային դեպարտամենտի տնօրեն Արկադի Փինաչյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Վարկավորման դեպարտամենտի տնօրեն Գրիգոր Հովհաննիսյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն Գևորգ Խաչատրյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն Արա Մակարյան, Բանկի գլխավոր հաշվապահ-Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտի տնօրեն Սեդրակ Բաղդասարյանը, Բանկի Առևտրի ֆինանսավորման և թղթակցային հարաբերությունների դեպարտամենտի տնօրեն Անժելա Բարսեղյանը:

1.2.3 Բանկի 16,667 հատ բաժնետոմսերից 14,588 հատ բաժնետոմսերի բաժնետեր է հանդիսանում «Էյջ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն, իսկ 2,079 հատ բաժնետոմսերի բաժնետեր է հանդիսանում «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն:

1.2.4 Բանկի նշանակալից մասնակիցն է «Էյջ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն, որը տիրապետում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 87,53 տոկոսին և ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն, որը տիրապետում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 12,47 տոկոսին:

1.2.5 Բանկի Խորհուրդը մեծ ուշադրություն է դարձնում Բանկում կարգապահ և բարձր որակավորում ունեցող միջին և բարձր օղակի ղեկավարների առկայության ապահովմանը: Խորհրդի կողմից պարբերաբար ուսումնասիրվում է ՀՀ-ում

աշխատուժի շուկան և Բանկի ղեկավարների վարձատրության (ներառյալ խրախուսմանն ուղղված վճարների) մակարդակը պահպանում է առավելագույն մրցակցային սահմաններում:

## **Ծանոթագրություն 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը**

### **2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը**

Բանկում ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում և ներկայացվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՖՀՄՍ-ների և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն:

Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու որևէ հարցի վերաբերյալ հաշվապահական հաշվառման ստանդարտներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում մոտեցումների բացակայության դեպքում Բանկը մշակում է դրանք ինքնուրույն, ելնելով՝

- ա. նման հարցերին վերաբերվող հաշվապահական հաշվառման ստանդարտներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից և ցուցումներից,
- բ. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքներից, ֆինանսական հաշվետվությունների տարրերի սահմանումներից, ճանաչման չափանիշներից և չափման հիմունքներից,
- գ. գործնական փորձից՝ այնքանով որքանով դա համահունչ է սույն կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված դրույթներին:

Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է՝

- ա. Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով,
- բ. Կրկնակի գրանցման եղանակով՝ ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանին և հաշվային պլանի կրառման հրահանգին համապատասխան,
- գ. Անընդհատ՝ Բանկի պետական գրանցման պահից մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:

Բանկի հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս պահպանում է անընդհատության, հաշվետվողականության, հաշվեգրման,

հասկանալիության, էականության, միասնականության, արժանահավատության, համադրելիության, հաշվանցման և սահմանազատման սկզբունքները:

## 2.2. Համախմբման սկզբունքները

Բանկը որևէ կերպ հաշվետվություններ չի համախմբում, հետևաբար չունի համախմբման սկզբունքներ:

## 2.3. Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

### *Տոկոսային եկամուտներ և ծախսեր*

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես «որպես տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ համապատասխանաբար օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը ճանաչվում է համապատասխան զուտ կամ համախառն հաշվեկշռային արժեքի հիման վրա՝ ՖՄՀՍ 9-ի պահանջների համաձայն:

### *Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր*

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարման և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

### *Շահաբաժիններից եկամուտ*

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը համարվում է վաստակած

### *Չուտ առևտրային եկամուտ*

Չուտ առևտրային եկամուտը ներառում է իրական արժեքով չափվող շահույթով և վնասով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական

արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից առաջացող իրացված եկամուտը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր տեսակի եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից առաջացող զուտ եկամուտը կամ ծախսը:

#### 2.4. Արտարժույթային գործառնությունների հաշվառումը

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված իրական արժեքով չափվող շահույթի և վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում:

Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից առաջացող մնացած բոլոր հետևանքները, որոնց հաշվառումը չի կարգավորված սույն ծանոթագրություններով, կարգավորվում են համապատասխան ՖՄՀՍ-ներով:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	30 հունիսի 2023	30 հունիսի 2022
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	386.06	407.21
ՀՀ դրամ/1 Եվրո	418.95	423.54

## 2.5. Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

## 2.6. Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը

Բակը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական

բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո այն ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված մայր գումարները և տոկոսագումարները հավաքագրելու նպատակով, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, իսկ այն ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված մայր գումարները և տոկոսագումարները հավաքագրելու նպատակով, ինչպես նաև հարկ եղած դեպքում վաճառելու նպատակով, չափվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, Իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներով հաշվառվող ֆինանսական ակտիվներ և Իրական արժեքով չափվող շահույթ և վնասով հաշվառվող ակտիվներ: Ֆինանսական ակտիվների նման դասակարգումը կատարվում է՝ հիմք ընդունելով Բանկի բիզնես մոդելը և դրա սահմաններում իրականացվելիք Բանկի հետագա նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել Բանկի բիզնես մոդելի փոփոխություն:

## **2.7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

## **2.8. Ռեպո համաձայնագրերով գործառնություններ**

Հետզնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, իսկ այդ պայմանագրերի համաձայն ստացված միջոցները

գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հողվածներում:

Հետգնման համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերը չեն ճանաչվում հաշվեկշռում որպես ակտիվներ, այլ հաշվառվում են Բանկի հետհաշվեկշռում, իսկ այդ արժեթղթերի դիմաց տրամադրված գումարները գրանցվում են որպես պահանջներ այլ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրամադրված ռեպո պայմանագրեր հողվածներում:

## **2.9. Ածանցյալ ֆինանսական գործիքներ**

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, սվոպներ և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող շահույթ և վնասով հաշվառվող ֆինանսական գործիքներ, այնուհետև դրանք չափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն: Նշված գործառնություններից արդյունքները հաշվառվում են որպես առևտրային գործունեությունից եկամուտ կամ ծախս՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

## **2.10. Վարկեր և փոխառություններ բանկերին, հաճախորդներին**

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին և այլ հաճախորդներին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերը և այլ փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական կազմակերպությունների և այլ հաճախորդների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

## **2.11. Արժեզրկման գծով կորուստների որոշման հիմունքները**

Արժեզրկման կորուստների պահուստաֆոնդը ձևավորվում է համաձայն ՖՀՄՍ 9-ը ստանդարտի պահանջների՝ սպասվող կորուստների գնահատման միջոցով: Արժեզրկման



կորուստների պահուստաֆոնդը ձևավորվում է “Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքելու համար պահվող ակտիվներ” և “Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքելու և վաճառելու համար պահվող ակտիվներ” բիզնես մոդելներին համապատասխանող ֆինանսական ակտիվների համար:

Սպասվող վարկային կորուստները գնահատելիս Բանկը հաշվի է առնում տեղեկատվության առավել լայն շրջանակ՝

- Անցյալում տեղի ունեցած իրադարձություններ, ինչպիսիք են նմանատիպ ֆինանսական գործիքների համար կրած վնասների վերաբերյալ պատմական փորձը;
- ներկա իրավիճակը;
- Արժանահավատ ու հիմնավորվող կանխատեսումներ, որոնք ազդում են ֆինանսական գործիքներից առաջացող ապագա դրամական հոսքերի սպասվող հավաքագրելիության վրա:

Ընդհանուր մոտեցմամբ արժեզրկումից կորստի հաշվարկը կատարվում է եռափուլ գործընթացով, որն արտացոլում է ֆինանսական գործիքի վարկային որակի նվազումը: Առաջին փուլը վերաբերում է գործիքներին, որոնց վարկային որակը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի նվազել կամ որոնք ունեն ցածր վարկային ռիսկ: Երկրորդ փուլը վերաբերում է ֆինանսական գործիքներին, որոնց մոտ սկզբնական ճանաչումից հետո նկատվել է վարկային որակի էական նվազում, սակայն վարկային կորուստ ազդարարող իրադարձության վերաբերյալ օբյեկտիվ վկայություններ չկան: Երրորդ փուլը վերաբերում է ֆինանսական ակտիվներին, որոնց արժեզրկման վերաբերյալ առկա են օբյեկտիվ վկայություններ:

Վարկային ռիսկի աճը գնահատելիս կազմակերպությունը համադրում է հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի չհավաքագրման ռիսկի սկզբնական ճանաչման պահի դրությամբ նույն ռիսկի հետ՝ հաշվի առնելով արժանահավատ ու հիմնավորվող տեղեկատվությունը:

Ցածր վարկային ռիսկ պարունակող գործիքների համար Բանկը կիրառում է ՖՀՄՍ 9-ը ստանդարտի առաջարկաց “պարզեցված մոտեցումը”: Ռիսկը համարվում է ցածր, եթե՝

- Գործիքն ունի չհավաքագրման ցածր ռիսկ,
- Փոխառուն ի վիճակի է մարել իր պայմանագրային պարտավորությունները,
- Տնտեսական ու գործարար միջավայրի բացասական փոփոխություններն էականորեն չեն ազդի փոխառուի վճարունակության վրա:

Պարզեցված մոտեցումը չի պահանջում, որպեսզի կազմակերպությունները հետևեն վարկային ռիսկի փոփոխություններին: Այն պահանջում է, որպեսզի կազմակերպությունները ճանաչեն կորստի պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի

դրությամբ ելնելով ֆինանսական ակտիվի ամբողջ ժամկետի համար հաշվարկված սպասվող վարկային կորուստից:

## **2.12. Տոկոսների հաշվեգրման դադարեցումը**

Տոկոսների հաշվեգրումը եկամուտների հաշիվներին դադարեցվում է, եթե ակտիվը սահմանված կարգի համաձայն դուրս է գրվում հաշվեկշռից:

## **2.13. Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հաշվառումը**

Ֆիքսված մարման ժամկետով ֆինանսական ակտիվները, որոնք Բանկի բիզնես մոդելի համաձայն պահվում են պայմանագրով նախատեսված մայր գումարներ և տոկոսագումարների հավաքագրելու նպատակով, հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

## **2.14. Հեջի հաշվապահական հաշվառումը**

Հեջի հաշվապահական հաշվառումը զուգահեռաբար ճանաչում է հաշվանցման ազդեցությունը զուտ շահույթի կամ վնասի վրա, որն առաջանում է հեջինգային գործիքների և հեջավորվող հոդվածների իրական արժեքների փոփոխությունների հետևանքով:

## **2.15. Ասոցիացված և դուստր կազմակերպություններում ներդրումների հաշվառումը**

Բանկը ասոցիացված և դուստր կազմակերպություններ չունի, հետևաբար այդպիսի հաշվառում չի մշակել:

## **2.16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ**

### *Հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով: Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Բանկին հետ վերադարձման, և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս: Տրամադրված ցանկացած զեղչ և արտոնություն հանվում է գնման գնից: Հետագա

ծախսերը, որոնք վերաբերվում են արդեն ճանաչված հիմնական միջոցի միավորին, ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Մյուս բոլոր հետագա ծախսերը պետք է ճանաչվեն որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր: Հիմնական միջոցների արժեքը փոխհատուցվում է դրանց մաշվածության հաշվեգրման միջոցով: Հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրումը Բանկն իրականացնում է՝ հանաձայն Բանկի Հաշվապահական հաշվառման քաղաքականության պահանջների:

### *Ոչ նյութական ակտիվներ*

Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական ճանաչման ժամանակ ձեռք բերման արժեքով: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է Բանկը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջինների որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի: Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

## **2.17. Բանկերի և հաճախորդների միջոցներ**

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, սկզբնապես չափվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանաձ գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

## **2.18. Ընդհանուր բանկային ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը**

Ընդհանուր բանկային ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշումն ընդունվում է Բանկի Խորհրդի կողմից, որն իրականացվում է Բանկի զուտ շահույթից գլխավոր պահուստին կատարվող մասհանումներով:

## **2.19. Կապիտալ և էմիսիոն եկամուտ**

### **Կապիտալ**

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերվող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

### **Գնված սեփական բաժնետոմսեր**

Երբ Բանկը գնում է իր սեփական բաժնետոմսերը, սեփական կապիտալը նվազեցվում է վճարված գումարի չափով, ներառյալ գործառնությանը բնորոշ բոլոր ծախսերը՝ նվազեցված հարկերով, մինչև գործարքի չեղյալ համարվելը կամ վերաթողարկումը: Երբ գնված բաժնետոմսերը վաճառվում են երրորդ կողմից կամ վերաթողարկվում են, ստացված գումարները ներառվում են կապիտալում:

### **Շահաբաժիններ**

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչ այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

## **2.20. Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը**

Փոխանակման փոխարժեքն ամեն օր հաստատվում է Բանկի գործադիր տնօրենի կողմից, որի առաջարկը ներկայացվում է համապատասխան ստորաբաժանման կողմից՝ ֆինանսական համակարգում տիրող իրավիճակն ուսումնասիրելուց հետո:

## **2.21. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը**

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտները և ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրությամբ հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

## **2.22. Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը**

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում իրականացվում է, եթե տեղի է ունեցել Բանկի բիզնես մոդելի փոփոխություն:

## **2.23. Տեղեկատվություն սեզմենտների վերաբերյալ**

Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվության բացահայտումն իրականացվում է թիվ 14 հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջներին համապատասխան:

Սույն ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին և Բանկի Էտրիդի կողմից հաստատված Հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:



**Ծանոթագրություն 3. «Ձուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ»**

<u>Տոկոսային և նմանատիպ եկամուտներ</u>	<u>01.04.23 30.06.23</u>	<u>01.01.23 30.06.23</u>	<u>01.04.22 30.06.22</u>	<u>01.01.22 30.06.22</u>
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	162,891	233,900	37,987	74,745
Տոկոսային եկամուտ հաճախորդների տրված վարկերից և փոխատվություններից	3,415,611	6,555,290	2,826,113	5,515,060
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	3,165,970	6,322,505	3,218,705	6,599,110
Տոկոսային եկամուտներ մինչև մարման ժամկետը պահվող պետական տոկոսային արժեթղթերից	2,218,464	4,458,065	2,249,855	4,526,371
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	65,998	137,798	31,796	50,875
Այլ տոկոսային եկամուտ	214,352	394,249	115,059	211,537
<b>Ընդամենը</b>	<b>9,243,286</b>	<b>18,101,807</b>	<b>8,479,515</b>	<b>16,977,698</b>
<b>Տոկոսային և նմանատիպ ծախսեր</b>	<b>01.04.23 30.06.23</b>	<b>01.01.23 30.06.23</b>	<b>01.04.22 30.06.22</b>	<b>01.01.22 30.06.22</b>
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց	1,153,817	2,133,049	960,294	1,788,906
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ռեֆազի և հաշիվների դիմաց	3,295,211	6,550,566	3,273,066	6,353,013
Տոկոսային ծախսեր բանկի կողմից բողոքված արժեթղթերի դիմաց	935,625	1,887,413	1,013,407	2,056,753
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	1,603,356	3,334,910	1,267,293	2,669,850
Այլ տոկոսային ծախսեր	2,972	3,529	10,469	12,249
<b>Ընդամենը</b>	<b>6,990,981</b>	<b>13,909,467</b>	<b>6,524,529</b>	<b>12,880,771</b>
<b>Ձուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</b>	<b>2,252,305</b>	<b>4,192,340</b>	<b>1,954,986</b>	<b>4,096,927</b>

**Ծանոթագրություն 4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»**

<u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</u>	<u>01.04.23 30.06.23</u>	<u>01.01.23 30.06.23</u>	<u>01.04.22 30.06.22</u>	<u>01.01.22 30.06.22</u>
Դրամարկային գործառնություններից	13,002	20,486	32,048	54,138
Հաշվարկային ծառայություններից	106,246	202,034	114,399	179,310
Երաշխիքներից, հոծարագներով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից	30,005	42,805	8,412	15,706
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	10,067	18,686	13,067	23,431
Այլ կոմիսիոն վճարներ	45,692	82,824	42,432	75,409
<b>Ընդամենը</b>	<b>205,012</b>	<b>366,835</b>	<b>210,358</b>	<b>347,994</b>
<b>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</b>	<b>01.04.23 30.06.23</b>	<b>01.01.23 30.06.23</b>	<b>01.04.22 30.06.22</b>	<b>01.01.22 30.06.22</b>
Թրջակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	16,861	31,476	18,013	42,353
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	230	243	1,487	3,480
Այլ կոմիսիոն վճարներ*	32,158	53,097	18,943	36,886
<b>Ընդամենը</b>	<b>49,249</b>	<b>84,816</b>	<b>38,443</b>	<b>82,719</b>
<b>Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ</b>	<b>155,763</b>	<b>282,019</b>	<b>171,915</b>	<b>265,275</b>

**Ծանոթագրություն 5. «Ձուտ եկամուտ ամառային գործառնություններից»**

<u>Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ</u>	<u>01.04.23 30.06.23</u>	<u>01.01.23 30.06.23</u>	<u>01.04.22 30.06.22</u>	<u>01.01.22 30.06.22</u>
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ առջ ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում	23,740	42,071	399	248
պարտքային արժեթղթերից	23,740	42,071	399	(533)
բաժնետոմսերից	0	0		781
<b>Ընդամենը</b>	<b>23,740</b>	<b>42,071</b>	<b>399</b>	<b>248</b>
<b>Արտարժույթային գործառնություններից</b>	<b>01.04.23 30.06.23</b>	<b>01.01.23 30.06.23</b>	<b>01.04.22 30.06.22</b>	<b>01.01.22 30.06.22</b>
Արտարժույթի առջ ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	179,999	445,754	439,506	686,275
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(14,035)	(83,230)	(449,100)	(554,231)
Ածանցյալ գործիքներից զուտ վնաս	(28,802)	(24,533)	24,662	18,105
<b>Ընդամենը</b>	<b>137,162</b>	<b>337,991</b>	<b>15,068</b>	<b>150,149</b>
<b>Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ծուլակտորների և հուշադրամների առջ ու վաճառքից ստացված զուտ եկամուտ</b>	<b>01.04.23 30.06.23</b>	<b>01.01.23 30.06.23</b>	<b>01.04.22 30.06.22</b>	<b>01.01.22 30.06.22</b>
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ծուլակտորների և հուշադրամների առջ ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	2,267	7,907	13,602	19,485
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ծուլակտորների և հուշադրամների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	1,196	413	(138,474)	(77,075)
<b>Ընդամենը</b>	<b>3,463</b>	<b>8,320</b>	<b>(124,872)</b>	<b>(57,590)</b>
<b>Ձուտ եկամուտ ամառային գործառնություններից</b>	<b>164,365</b>	<b>388,382</b>	<b>(109,405)</b>	<b>92,807</b>

**Ծանոթագրություն 6. «Այլ գործառնական եկամուտ»**

<u>Այլ գործառնական եկամուտ</u>	<u>01.04.23</u> <u>30.06.23</u>	<u>01.01.23</u> <u>30.06.23</u>	<u>01.04.22</u> <u>30.06.22</u>	<u>01.01.22</u> <u>30.06.22</u>
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	71,358	128,330	40,814	94,234
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված գուտ եկամուտներ	-	3,759	683	36,922
Այլ եկամուտներ**	20,474	50,877	8,353	26,724
<b>Ընդամենը</b>	<b>91,832</b>	<b>182,966</b>	<b>49,850</b>	<b>157,880</b>

**Ծանոթագրություն 7. «Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված գուտ մասհանումներ»**

<u>Ընդամենը վարկային կորուստների արժեզրկման ծախսեր</u>	<u>01.04.23</u> <u>30.06.23</u>	<u>01.01.23</u> <u>30.06.23</u>	<u>01.04.22</u> <u>30.06.22</u>	<u>01.01.22</u> <u>30.06.22</u>
Վարկեր և փոխառություններ համախորդներից	(472,892)	(1,079,549)	463,423	438,710
<b>Ընդամենը</b>	<b>(472,892)</b>	<b>(1,079,549)</b>	<b>463,423</b>	<b>438,710</b>

**Ծանոթագրություն 8. «Ընդհանուր վարչական ծախսեր»**

<u>Ընդհանուր վարչական ծախսեր</u>	<u>01.04.23</u> <u>30.06.23</u>	<u>01.01.23</u> <u>30.06.23</u>	<u>01.04.22</u> <u>30.06.22</u>	<u>01.01.22</u> <u>30.06.22</u>
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով*	528,208	1,041,103	474,520	933,473
Գործուղման ծախսեր	9,239	10,640	6,826	11,257
Ապահովագրության ծախսեր	14,613	31,865	10,952	19,919
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	1,148	3,077	1,089	2,543
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր	12,093	27,292	12,219	26,427
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	2,968	27,386	4,950	13,950
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	36,216	66,579	35,730	63,414
Տրանսպորտային ծախսեր	976	1,335	1,065	2,080
Ծախսեր հարկերի (բացառությամբ՝ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարումների գծով	2,762	5,476	4,205	6,504
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	2,162	4,078	1,935	3,493
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	11,122	23,205	10,439	17,899
Այլ վարչական ծախսեր**	22,176	30,198	9,186	15,012
<b>Ընդամենը</b>	<b>643,683</b>	<b>1,272,234</b>	<b>573,116</b>	<b>1,115,971</b>

\* Աշխատանքների միջին քվադրանտ

157      157      151      154

\*\* Մեկ աշխատողին ընկնող միջին ամսական աշխատավարձի բաժ

891      875      725      777

**Ծանոթագրություն 9. «Այլ գործառնական ծախսեր»**

<u>Այլ գործառնական ծախսեր</u>	<u>01.04.23</u> <u>30.06.23</u>	<u>01.01.23</u> <u>30.06.23</u>	<u>01.04.22</u> <u>30.06.22</u>	<u>01.01.22</u> <u>30.06.22</u>
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	689	1,190	557	1,001
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	3,253	10,780	4,125	13,447
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	66,011	121,425	52,549	104,308
Այլ ծախսեր***	22,879	37,529	15,472	31,325
<b>Ընդամենը</b>	<b>92,832</b>	<b>170,924</b>	<b>72,703</b>	<b>150,081</b>



**11 Հաիւթահարկի գծով ծախս (փոխհատուցում)**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18%: ՀՀ հարկային օրենսդրության և ՀՀՄԱ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով: Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը:

Հազար ՀՀ դրամ	01.01.23 30.06.23	Արդյունավետ դրույքաչափ (%)	01.01.22 31.12.22	Արդյունավետ դրույքաչափ (%)
<b>Ետույթ մինչև հարկումը</b>	1,617,829		5,216,268	
Ետույթահարկ	291,209	18	938,928	18
Զնվազեցվող ծախսեր	10,446		39,313	
Դրական/(Բացասական) փոխարժեքային տարբերություն	(107,350)		(1,002,607)	
Այլ	205,695		1,484,366	
<b>Ընդամենը շահութահարկի գծով ծախս</b>	<b>400,000</b>		<b>1,480,000</b>	

**Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ**

Հազար ՀՀ դրամ	30.06.23	Սեփական կապիտալում ճանաչված	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	31.12.22
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(5,591)			5,646
Հաճախորդներին տրված վարկեր և կանխավճարներ	73,747			220,792
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	2,498,222			4,109,554
Ներդրումային արժեքըներ	61,038			102,339
Հիմնական միջոցներ	(163,788)			(177,723)
Այլ ակտիվներ	(23,171)			(14,792)
Այլ պահուստներ	2,794			
